

Հայ եկեղեցու անկախացման գործընթացը  
ազգային ինքնության պահպանման համատեքստում

փ. գ. թ. Հ. Լ. Սարգսյան

Եկեղեցական ինքնավարության խնդիրը դա զուտ կրոնական, կրոնական կազմակերպություններին և դրանց հարաբերություններին վերաբերող խնդիր չէ: Պատմական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կրոնական գործընթացները հաճախ սերտորեն կապված են քաղաքական գործընթացների հետ՝ քաղաքական հակամարտությունը ծնում է կրոնական հակամարտություն, կրոնական բախումը հանգեցնում է քաղաքական բախման կամ էլ քաղաքական գործընթացը ընթանում է կրոնական քողի տակ: Այդ պատճառով կրոնական կազմակերպությունները հաճախ դառնում են քաղաքական գործառույթներ իրականացնող ինստիտուտներ և դրանով իսկ վերածվում նաև քաղաքական, իսկ երբեմն՝ ազգային-քաղաքական ինստիտուտի: Միջնադարում կրոնական գաղափարախոսությունների պայքարը քաղաքական պայքարի արտացոլումն ու շարունակությունն էր:

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում արդեն իսկ ուներ քաղաքական ենթատեքստ: Կարելի է նույնիսկ ասել, որ դա Տրդատ Մեծի պետական քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներից էր: Քրիստոնեությունը այն գաղափարախոսությունն էր, որը պետք է հիմնավորեր արքայի կենտրոնաձիգ իշխանությունը: Միաժամանակ, այն գաղափարական պատնեշ պետք է դառնար հզոր հակառակորդների՝ հեթանոսական Հռոմի և զրադաշտական Պարսկաստանի զավթողականության դեմ:

Հայ եկեղեցու հետագա ողջ պատմությունն էլ կարելի համարժեք ըմբռնել միայն ազգային կեցության պահանջմունքների համատեքստում:

Հայտնի է, որ քրիստոնեությունը համաշխարհային կրոն է, այսինքն՝ համամարդկային և վերազգային իր էությամբ: Սակայն փաստ է նաև այն, որ վաղ քրիստոնեական տիեզերական եկեղեցին երկար գոյություն չունեցավ և աստիճանաբար բաժանվեց բազմաթիվ ինքնուրույն եկեղեցիների: Այդ եկեղեցիների մի մասը ձեռք բերեց ազգային բնույթ, այսինքն՝ դրանք վերածվեցին ազգային եկեղեցիների: Լինել ազգային նշանակում էր լինել ինքնավար, այսինքն՝ անկախ:

IV դ. կեսերից Արշակունյաց հայոց թագավորությունը բռնեց անկման ուղին: Պետականության կորստի վտանգի առջև կանգնած հայ ազգը պետք է այլ միջոցներ գտներ սեփական ինքնությունը պահպանելու համար: Նման միջոցներից էր եկեղեցու

ինքնավարությունը, նրա անկախացումը տիեզերական (իմա՝ կայսերական) եկեղեցուց: Անկախացման այդ գործընթացը կարելի է անվանել նաև Հայ եկեղեցու ազգայնացման գործընթաց:

Հայ եկեղեցին առաջիններից բռնեց ազգայնացման ուղին: Դա ուներ իր բացատրությունը: 313 թ. սկսեց քրիստոնեության պաշտոնականացումը և աստիճանական վերածումը պետական կրոնի Հռոմեական կայսրությունում: Տիեզերական եկեղեցին հռոմեական (հետագայում՝ բյուզանդական) կայսրերի ձեռքում հարմար գործիք էր սեփական կայսերական դիրքերը ամրապնդելու և գործողությունները արդարացնելու համար: Ընդ որում, դա այն շրջանն էր, երբ Հռոմը ավելի է մեծացնում քաղաքական ճնշումը Հայաստանի վրա: Պետականության կորստի վտանգը դարձել էր իրական և շոշափելի: Այս պայմաններում Հայ եկեղեցին պետք է որևէ կերպով առանձնանար տիեզերական եկեղեցուց և որոշակի ինքնուրույնություն և ինքնավարություն ձեռք բերեր: Նման ձգտման արդյունքն էր Հայ եկեղեցու ազգայնացումը:

Հայ եկեղեցու ազգայնացման գործընթացում կարելի է երեք փուլ առանձնացնել՝ կազմակերպչական (եկեղեցական կառույցի կառավարման առումով), պաշտամունքային, դավանաբանական:

Հայ եկեղեցու անկախացման առաջին քայլը կատարեց Պապ թագավորը: Ինչպես հայտնի է, հայոց կաթողիկոսները ձեռնադրվում էին Կեսարիայում տեղի մետրապոլիտի կողմից: Պապը խախտեց այդ ավանդույթը: Ներսես Մեծին հաջորդած կաթողիկոսին նա չուղարկեց Կեսարիա, այլ ինքը ձեռնադրեց: Այս քայլով նա, նախ և առաջ, ցանկանում էր եկեղեցին, հոգևոր իշխանությունը ամբողջովին ենթարկել թագավորական իշխանությանը: Միաժամանակ, եկեղեցական կառույցի ղեկավարման առումով Հայ եկեղեցին ինքնավարություն էր ձեռք բերում:

Սակայն եկեղեցու ողջ ինքնավարությունը ապահովելու համար դա դեռևս բավական չէր: Գոյություն ունեին եկեղեցիների վրա ազդելու, նրանց կապանքների մեջ պահելու այլ եղանակներ: Դրանցից էր, օրինակ, եկեղեցական լեզուն, որով կատարվում էին ծեսերը, քարոզվում էր քրիստոնեական ուսմունքը, և, վերջապես, որով շարադրված էր Աստվածաշունչը: Պատահական չէ, որ Հայ եկեղեցու ազգայնացման երկրորդ քայլը իրականացվեց հայոց գրերի ստեղծման միջոցով:

IV դ. վերջին Հայաստանը, ըստ էության, կորցրեց իր անկախությունը: 387 թ. այն բաժանվեց Հռոմի (Բյուզանդիայի) և Պարսկաստանի միջև: Բյուզանդական մասում պետականությունը իսկույն վերացվեց, իսկ պարսկականում՝ թեև պահպանվեց, սակայն գուտ անվանապես: Ազգի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների կարծիքով, միայն

քրիստոնեությունը կարող էր լինել այն գաղափարախոսությունը, որը կմիավորի ժողովրդին, կապահովի նրա միասնականությունը պետականության բացակայության պայմաններում: Սակայն հեթանոսությունը դեռևս բավականին տարածված էր ժողովրդի մեջ: Հայոց գրերի ստեղծումը դառնել էր առաջնահերթ խնդիր: Անհրաժեշտ էր քրիստոնեությունը քարոզել ու տարածել հայերենով և Հայ եկեղեցու պաշտոնական լեզուն դարձնել հայերենը: Դա ոչ միայն բարդագույն կրոնա-եկեղեցական, մշակութային, այլև քաղաքական խնդիր էր<sup>1</sup>:

Հայտնի է, որ քրիստոնեության պաշտոնական լեզուներն էին հունարենը, լատիներենը և ասորերենը: Անհրաժեշտ էր հմտորեն օգտագործել Կոնստանդնուպոլսի և Անտիոքի եկեղեցու, ինչպես նաև՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև առկա հակասությունները և այդ բոլոր կողմերից «թույլատրություն» ստանալ հայ գրերի ստեղծման և տարածման, եկեղեցու պաշտոնական լեզու դարձնելու համար: Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի աջակցությամբ այդ քաղաքական-մշակութային խնդիրը իրականացրեց Մեսրոպ Մաշտոցը:

Կարճ ժամանակահատվածում հայերեն թարգմանվեցին քրիստոնեական գրականության գլխավոր հուշարձանները և, առաջին հերթին, Աստվածաշունչը<sup>2</sup>: Եկեղեցական ծեսերը արդեն կատարվում էին հայերենով: Այսինքն՝ հայերենը դարձավ Հայ եկեղեցու պաշտոնական լեզուն: Դա նշանակում էր, որ Հայ եկեղեցին հասավ պաշտամունքային անկախության: Դրանով իսկ ավելի ընդգծվեց նրա ազգային բնույթը և ինքնավարությունը:

Հետաքրքիր է, որ հայոց գրերի ստեղծման քաղաքական շարժառիթների վրա ուշադրություն են դարձրել նաև որոշ գիտնական-եկեղեցականներ: Այսպես, Մ. Օրմանյանը գրում է. «Սահակի և Մեսրոպի խորաթափանց տեսութունը նշմարեց քաղաքական կեանքի քայքայեալ վիճակը, նախատեսեց ազգին սպառնացուած պետքը, կազմեց գիրերը, ստեղծեց գրականութիւնը, եւ փրկեց մեր ապագան»<sup>3</sup>:

Հայ եկեղեցու անկախացման գործընթացում երրորդ կարևորագույն քայլն էր 451թ. Քաղկեդոնի ժողովին չմասնակցելը, որտեղ քննարկվում էր Քրիստոսի բնության (եության) մասին հարցը, և հետագայում միաբնակության բանաձևի ընդունումը: Քաղկեդոնի ժողովում քննարկվում էր աստվածաբանական խնդիր, սակայն բոլոր շահագրգիռ կողմերը փորձում էին քաղաքական հարց էր լուծել: Այսպես, Բյուզանդական կայսրը փորձում էր Պոլսի պատրիարքի միջոցով պարտադրել Ալեքսանդրիայի և Անտիոքի հեղինակավոր եկեղեցիներին իր բանաձևը, դրանով իսկ գաղափարական առումով վերջնականապես ենթարկել կայսրության նահանգների այդ խոշոր կենտրոնները կենտրոնական կայսերական իշխանությանը<sup>4</sup>: Ազգային

եկեղեցիներն էլ փորձում էին պահպանել իրենց դավանաբանական ինքնուրույնությունը, ինչ-որ առումով լրացնելով կորցրած քաղաքական ինքնուրույնությունը:

Ինչպես հայտնի է, Հայ եկեցին իր պատվիրակների բացակայությունը այդ տիեզերաժողովում բացատրում էր այն հանգամանքով, որ ողջ ազգը այդ ժամանակ պայքարում էր Սասանյան Պարսկաստանի դեմ: Իրականում, թվում է, դա միայն առիթ էր, այլ ոչ պատճառ ժողովի աշխատանքներին չմասնակցելու համար: Ընդ որում, Հայ եկեղեցին իր պաշտոնական դիրքորոշումը քննարկվող հարցի մասին կհայտնի ավելի քան հարյուր տարի հետո: Բանն այն է, որ մինչ Քաղկեդոնի ժողովը արդեն պարզ էր, որ բյուզանդական կայսրի հարկադրանքով ընդունվելու է երկաբնակության բանաձևը: Եթե Հայ եկեղեցին մասնակցեր ժողովին, ապա կամ պիտի ընդուներ այդ բանաձևը, ինչը կնշանակեր, որ եկեղեցին կկորցներ իսկույն իր ինքնուրույնությունը, ձուլվելով տիեզերական եկեղեցուն, կամ էլ պետք է հրաժարվեր ընդունել բանաձևը, առիթ տալով կայսրությանը բռնություն կիրառել Հայաստանի և Հայ եկեղեցու նկատմամբ:

Հայ եկեղեցին սպասողական դիրք էր զբաղեցրել, քանի որ Քաղկեդոնի ժողովից անմիջապես հետո կայսրությունը կանգնեց միաբնակների և երկաբնակների միջև քաղաքացիական պատերազմի եզրին: Կայսրերը սկսեցին զիջումներ անել միաբնակներին: Հայ եկեղեցին սպասում էր, թե ինչպիսի վերջնական դիրքորոշում կընդունի կայսրությունը: Պատահական չէ, որ Գվինի I ժողովում (506թ.) Հայ եկեղեցին փաստորեն չարտահայտեց իր դիրքորոշումը քննարկվող հարցի շուրջ: Եվ միայն երբ Հուստինիանոս կայսրը (527 – 565 թթ.) դաժան հալածանքներ սկսեց միաբնակների դեմ և պարզ դարձավ Բյուզանդիայի վերջնական դիրքորոշումը, Հայ եկեղեցին Գվինի II ժողովում (554 թ.) նույնացրեց քաղկեդոնականությունը (երկաբնակությունը) աղանդ հայտարարված նեստորականության հետ և ընդունեց միաբնակության բանաձևը: Դրանով իսկ Հայ եկեղեցին տարանջատվեց տիեզերական եկեցուց նաև դավանաբանական առումով, դառնալով նաև այս ոլորտում անկախ և ինքնուրույն:

Դրանից հետո Կոնստանդնուպոլսի եկեղեցին դարեր շարունակ ճնշում էր գործադրում Հայ եկեղեցու վրա, փորձելով այն ձուլել «տիեզերական» եկեղեցու հետ: Պոլսի եկեղեցին գործիք էր իր քաղաքական նպատակները հետապնդող հզոր Բյուզանդական կայսրության ձեռքում՝ ամբողջովին վերացնել հայերի ինքնուրույնությունը: Հայ հոգևոր գործիչները ամեն կերպ դիմադրում էին: Այս պայքարը շարունակվեց մինչև որ Բյուզանդիան թուլացավ, իսկ հետո՝ կործանվեց:

Ինչ վերաբերում է Հռոմեական (հետագայում՝ կաթոլիկ) եկեցուն, ապա Հայ եկեղեցին սկզբում անմիջական շփումներ չունեցրեցին հետ: Սակայն երբ Կիլիկիայում

հզորացավ հայկական իշխանությունը, կաթողիկոսությունը տեղափոխվեց այնտեղ, միաժամանակ սկսեցին խաչակրաց արշավանքները Արևելք, ապա Հայ եկեղեցու ինքնուրույնությանը արդեն վտանգ էր սպառնում Կաթողիկ եկեղեցու կողմից: Այն լայն միարարական գործունեություն ծավալեց Հայ եկեղեցին իր մեջ ձուլելու նպատակով: Հայ եկեղեցին չէր հրաժարվում երկխոսությունից, քանի որ շրջապատված էր մահմեդական հակառակորդներով, սակայն մի պայմանով, որ կպահպանի իր ինքնավարությունը: Բայց կաթողիկ եկեղեցու նպատակն էր ոչ թե եկեղեցիների միացումը հավասար հիմունքներով, այլ Հայ եկեղեցու ինքնուրույնության վերացումը և ձուլումը: Հետագայում միարարական շարժումը տարածվեց նաև բուն Հայաստանում: Այստեղ լայն գործունեություն ծավալեցին ֆրանցիսկանական, իսկ հետագայում՝ Թովմա Աքվինացու ուսմունքով զինված դոմինիկյան միաբանությունների անդամները: Գրանք փորձում էին հիմնավորել տիեզերական, այսինքն՝ Հռոմեական վերագգային եկեղեցու առաջնայնությունը առանձին ազգային եկեղեցիների նկատմամբ: Հայ անվանի մտածողներ Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, ընդհակառակը, հիմնավորում էին, որ առաջնային են առանձին եկեղեցիները՝ առանց եզակիի ընդհանուրը գոյություն չունի<sup>5</sup>:

Աստվածաբանական-փիլիսոփայական մակարդակում ընթացող այս բանավեճը արտացոլումն էր այլ՝ եկեղեցական-քաղաքական և նույնիսկ ազգային-քաղաքական մակարդակում ընթացող պայքարի: Կաթողիկ եկեղեցին ձգտում էր տիեզերական իշխանության, իսկ Հայ եկեղեցին պայքարում էր իր ինքնավարությունը, դրանով իսկ, պետականության բացակայության պայմաններում ազգի հոգևոր, մշակութային ինքնությունը և միասնականությունը պահպանելու համար:

Հայ եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմության մեջ վիթխարի է: Պետականության բացակայության պայմաններում այն իր վրա էր վերցրել պետության որոշ գործառնություններ՝ ղեկավարում էր ազգային-ազատագրական շարժումը, փորձում էր պահպանել ազգի միասնությունը, նրա հոգևոր-մշակութային ինքնությունը: Դա հնարավոր էր միայն այն դեպքում, եթե ինքը Հայ եկեղեցին լիներ անկախ, ինքնավար, ազգային: Միայն այս համատեքստում պետք է դիտարկել և գնահատել այն պայքարը, որ Հայ եկեղեցին դարեր շարունակ մղում էր իր ազգային բնույթը պահպանելու համար: Ավելին, մեր կարծիքով, այդ պայքարը դեռ չի ավարտվել: Գլոբալիզացիայի արդի դարաշրջանում ազգային ինքնավար եկեղեցու առկայությունը աշխարհով մեկ սփռված հայ ազգի ինքնության, սեփական դեմքի պահպանման կարևորագույն գրավականներից է:

1. Գրերի գյուտի իրրև ազգային-քաղաքական պայքարի գործոնի մասին տե՛ս *Мирумян К.А.* Изобретение армянских письмен как фактор борьбы за национально-политический суверенитет. / Вестник РАУ. N 3 / 2006.
2. Քրիստոնեական գրականության թարգմանության ծրագրային բնույթի մասին տե՛ս *Արևշատյան Ս.Ս.* Формирование философской науки в Древней Армении (V – VI вв.). Ереван, 1973, с. 34-44.
3. *Օրմանյան Մ.*, Ազգապատում, հատոր Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 325:
4. Տե՛ս *Օրմանյան Մ.*, Հայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 51-54:
5. Տե՛ս *Միրումյան Ա.*, Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 2002, էջ 202-206:

### Резюме

Хотя христианство является по своей сути мировой, наднациональной религией, но многие христианские церкви по своему характеру являются национальными церквями. Процесс суверенизации и национализации церквей превращает их из сугубо религиозного института также в национально-политический институт.

Армянская церковь одной из первых взяла курс на национализацию и суверенизацию, что можно объяснить потерей армянской государственности. Только будучи суверенной, она могла взять на себя определенные функции государства и обеспечить единство нации, сохранение культурной самобытности в условиях отсутствия государства.

В процессе суверенизации Армянской церкви можно выделить три этапа. Сначала армянская церковь *организационно* стала независимой – армянского католикоса стал посвящать в сан армянский царь. Затем были изобретены армянские письмены, и армянский язык стал официальным языком Армянской церкви – армянская церковь стала суверенной в *культовом* плане. И наконец, приняв формулу монофизитизма, она откололась от вселенской церкви и в *догматической* сфере.

Долгие века Армянская церковь боролась сначала с Византийской (Константинопольской), а затем с Римской церквями, которые пытались ее слить с собою, и в этой борьбе ей удалось сохранить свой суверенный, национальный характер.